# Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-6/24 ԼՂՀ

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը՝** | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում Ստեփանավան |
| **Դրամաշնորհի N** | N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-6/24 ԼՂՀ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակատված** | 01.02.2024 – 31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.02.2024 – 31.03.2024 |
| **Ներկայացման օր** | 10.04.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու** | Գոհար Գևորգյան<br>Ծրագրերի համակարգողի պարտականությունները կատարող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար**

| |
|---|
| **Միջոցառում 1.** Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ:<br>**Միջոցառում 2**. Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:<br>**Միջոցառում 3**. Սոցիալ-հոգեբանական վերականգմանն ուղղված ծառայությունների տրամադրում:<br>**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:<br>**Միջոցառում 5.** Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում:<br>**Միջոցառում 6.** Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:<br>**Միջոցառում 7.** Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:Ազատ ժամանցի և մշակույթային միջոցառումների կազմակերպում:<br>**Միջոցառում 9.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում: |

2.2 **Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

**Միջոցառում 1.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով **2** շահառուի կարիքների գնահատում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 2**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով **2** սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 3**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **2** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտությունների զարգացնող խմբակներում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 5**.

- Փետրվարի 19-ին Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնում (Ստեփան Շահումյանի տուն-թանգարան) կայացավ գրքի տոնին նվիրված միջոցառում, որին ներկա էին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի շահառուները:

**Միջոցառում 6.** Մարտի 27-ին կենտրոնի շահառուների թվով 13 ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները՝

- «Վախերի հաղթահարումը արտթերապիայի միջոցով», վարող արտթերապիստ՝ Անահիտ Վահրադյան:
- «Բռնություն ընտանիքում և ընտանիքից դուրս» վարող սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյան:

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 9/ հաշվետու ժամանակահատվածում թվով 4 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 9**. Իրականացվել է գնահատում (ծրագրի 3-րդ ամսվա ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Իրականացված գնահատման արդյունքում հստակ և պարզ դարձավ, որ Ծրագիրը միանշանակ աջակցում է շահառուներին, այդ են վկայում շահառուների հարցումը: Վերջիններիս մոտ կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճը և գոհունակությունը ստացած ծառայություններից 85 % է արձանագրվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝**

| |
|---|
| Ստորև ներկայացվում է Ստեփանավանի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը https://www.facebook.com/groups/738413854220041 |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

| |
|---|
| • 16-19.02.2024 թ-ին կենտրոնի բազմամասնագիտական թիմը մասնակցեց «Շահառուների կարիքների գնահատում և ծառայությունների մատուցում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ» վերապատրաստման դասընթացին: |

Ծրագրերի համակարգողի պարտականությունները կատարող — Գ. Գևորգյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ — Ս. Մաղաքյան

Digitally signed by MAGHAKYAN SUREN 3312720087
Date: 2024.04.10 21:56:23 AMT